ՉԻՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ ԿԱՄ
ՆՐԲԱՆԿԱՏ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Գ

Չինաստանի որդեգրած նրբանկատ դիվանագիտությունն առավել մեծ նշանակությամբ արտահայտվեց Փեհենյանի կողմից միջուկային զենքի ստեղծման գաղափարի արտահայտման ժամանակ:

«Իսկ ի՞նչ կասի Չինաստանը». Այսպիսին էր «Վաշինգտոն Պոստ»-ի գնահատականով[1] Ասիայի քաղաքական շրջանների առաջին արձագանքը, 2005 թ. փետրվարի 10-ի Փեհենյանի այն հայտարարությանը, որ Հյուսիսային Կորեան ստեղծել է միջուկային զենք և դադարեցնում է իր մասնակցությունը միջուկային խնդիրներով վեցակողմ բանակցություններին: Չինաստանի պատասխանը շատ չուշացավ: Աստանայում, որտեղ Չինաստանի արտաքին գործերի նախարար Լի Չժաոսինը մասնակցում էր Շանհայյան համագործակցության կազմակերպության՝ նախարարների խորհրդի աշխատանքներին, նիստից հետո լրագրողներին հայտնեց. «Չինաստանի առաջնորդ Հու Զինտաոն Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության ղեկավարությանը փոխանցել է բանավոր ուղերձ, որին ի պատասխան Փեհենյանը հայտարարել է, որ, այնուամենայնիվ, հավատարիմ է մնում առանց միջուկային զենքի կորեական թերակղզու գաղափարին և պատրաստ է կրկին վերադառնալու բանակցությունների»[2]: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ, երբ խընդրում են չինացիները, հյուսիսկորեացիներն արագ համաձայնվում են, և որևէ մեկին, բացի Պեկինից, նման բան չի հաջողվում:

Մինչ այդ իրադարձությունները դիվանագիտական հետաքրքիր միջադեպ տեղի ունեցավ, երբ բանակցությունների վեց մասնակիցներից երեքը՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան և Հարավային Կորեան հավաքվել էին Սեուլում, որպեսզի ձևակերպեն իրենց առանձին պատասխանը Հյուսիսային Կորեային: «Պեկինը և Մոսկվան դուրս են մնում վեցյակից»,- սկսեցին կանխատեսել դիվանագիտական շրջանները: Սակայն նրանց կանխատեսումները չիրականացան: Սեուլյան հանդիպման ընթացքում այնպես եղավ, որ անհապաղ Պեկին ժամանեց Ճապոնացի դիվանագետը՝ դիմելով չինացի գործընկերներին. «Օգնեցեք, առանց ձեզ ոչինչ չի ստացվում»[3]: Եվ վեցյակը շարունակեց իր գործունեությունը:

Այստեղ հետաքրքիր է ոչ թե այն փաստը, որ միայն Պեկինին է հաջողվում հյուսիսկորեական ղեկավարներին կրկին ու կրկին վերադարձնել բանակցությունների սեղանի մոտ, այլ առավել էական է այն, թե Չինաստանը ե՞րբ

---

[1] **Kessler G.** *Signs Stir Concern North Korea Might Test Nuclear Bomb (The Washington Post. 23.IV.2005), p. 13 http://www.washingtonpost.com*

[2] **China Daily,** *Beijing, 2005, N 36, p. 5.*

[3] *http://www.fsmitha.com/h1/ch28ch.htm*

դարձավ տարածաշրջանային և համաշխարհային կարևոր տերություն ինչպես կորեական ճգնաժամի, այնպես էլ համաշխարհային հարցերում:

Չինաստանը, ինչպես հայտնի է, աշխարհին տվել է թեյ, վառոդ, մետաքս: Հարց է առաջանում՝ արդյոք չինական քաղաքակրթությունը չունի՞ միջազգային հարգանք վայելելու իր դեղատոմսը:

Չինական դիվանագիտության գլխավոր բնորոշիչը ոչ ագրեսիվությունն է, գոնե այն դեպքերում, երբ Պեկինն ունի վարվելակերպի ոճի ընտրություն: 1992 թ. Պեկինի Ժողովրդական դիվանագիտության ինստիտուտի փորձագետների գիտաժողովում հնչեց հետևյալ միտքը. «Մենք շատ կուզենայինք, որ աշխարհը, որքան հնարավոր է, երկար ժամանակ չնկատեր, թե ինչպես է աճում Չինաստանի հզորությունը: Մեզ ժամանակ է հարկավոր, որպեսզի կողմնորոշվենք, թե ինչպես օգտվենք այդ հզորությունից»[4]:

Այնուամենայնիվ, երկար ժամանակ թույլ և փոքր ձևանալ չհաջողվեց: 1992 թ. լույս տեսավ ՄԱԿ-ի զեկույցը, որում աշխարհի երկրների տնտեսության աճը չափվում էր ոչ թե տեղական տարադրամի նկատմամբ դոլարի բորսային փոխարժեքով, այլ տեղական դրամի իրական գնողունակությամբ: Պարզվեց, որ Չինաստանն այդ ժամանակ արդեն ուներ աշխարհի կայացած տնտեսություններից մեկը:

Նրբանկատներին սիրում են ավելի, քան ուժեղներին: «Վաշինգտոն պոստ»-ի թղթակցի կարծիքով, դիվանագիտական և այլ տեսակի բոլոր խորհրդակցությունների ժամանակ Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կանոն է դարձել տարբեր առիթներով կարծիք և խորհուրդ հարցնել չինացի դիվանագետներից: Դա նշանակում է, որ Պեկինը Հարավարևելյան Ասիայում ստանձնել էր դատավորի դերը, որն առաջ պատկանում էր Վաշինգտոնին: Այն էլ այն դեպքում, երբ հենց Ասիայի այդ մասը 1960-1970-ական թթ. ըմբոստանում էր չինական ազդեցության դեմ: Ավելին, հարավարևելյան տարածաշրջանում բնակություն հաստատած չինական արտագաղթողների համայնքը (մոտ 20մլն) այդ տարիներին տրամադրված էր Պեկինի դեմ և կողմնորոշված էր դեպի Թայվան[5]:

Այսօր արդեն ամեն ինչ հակառակն է: Հենց հայրենակիցների ներդրումները 1980-ականի առաջին զարկը տվեցին «չինական հրաշքին», իսկ հետագայում գործընթացին միացավ ամերիկյան և ճապոնական կապիտալը:

Ինչո՞ւ: Մեր կարծիքով, պատասխաններից մեկը «մշակութային ազդեցությունն է»: Մշակութային ազդեցության հիմքը չինական փիլիսոփայությունն է: Առաջին հերթին, կոնֆուցիականությունը, որը թելադրում է սոցիալական հավասարություն, արդարություն: Այս ուսմունքը ժողովրդին մոտ է պահում կառավարությանը, և «ժողովուրդը հիմք է» հայեցակետի հեղինակն է: Լինելով չինական կայսերական

[4] **Косырев Д.** *А что скажет Китай? (ЦентрАзия, 09.03.2005) http://www.centrasia.ru/newsA.php?st=1110359220*

[5] **Louie A.** *Chinese Americans and the Chinese Motherland (American Ethnologist, N 27, 07.I.2000, p. 647).*

գաղափարախոսություն՝ կոնֆուցիականությունը շատ մեծ ազդեցություն է թողել չին ազգի քաղաքական մշակույթի կազմավորման վրա[6]:

Եթե 1980-1990-ական թթ. տարածաշրջանում նորաձև էր ճապոնական մշակույթը, ապա վերջին տարիներին այստեղ առաջին պլան է մղվում չինականը: Բնականաբար, մետրապոլիայի մշակութային գերիշխանությունից առաջին հերթին շահում են հայրենակիցները, որովհետև նրանց մշակույթն է խիստ կարևորվում, նրանց են վարձում ստեղծված աշխատատեղերում, և նրանք, անշուշտ, այս գործընթացում մասնակցում են որպես միջնորդ, որպես կամուրջ՝ չինացիների և այն ժողովրդի միջև, որոնց շրջանում բնակվում են:

Երկրորդ, էական նշանակություն ունի փողը: Միջնորդի, կամրջի այդպիսի դեր հայրենակիցների համար կատարում է նաև առևտուրը՝ արդեն այն պատճառով, որ մշակութային լեզվով են խոսում ինչպես չինացիների, այնպես էլ տարածաշրջանի մյուս ժողովուրդների հետ: Դրա շնորհիվ 1990-ական թվականներին Չինաստանի առևտուրը հարավարևելյան երկրների հետ աճեց տարեկան 20%-ով, և 2004 թ. հասավ 100 միլիարդի ցուցանիշին[7]:

Փողը, սակայն, ամենազոր չէ: Ճապոնիան նույն տարածաշրջան է ներդրել ավելի շատ միջոցներ, կատարել բարեգործություն, սակայն հիմա ընդունում է, որ տարածաշրջանում առաջնային դերը պատկանում է Չինաստանին: Կենտրոնական հետախուզական վարչության տվյալներով, Չինաստանը Ճապոնիայից առաջ կանցնի 2015-2020 թթ., ԱՄՆ-ը Չինաստանին իր առաջատարի դերը կզիջի 2040 թ. հետո[8]:

Կարևո՞ր է արդյոք այն փաստը, որ 2010 թ. հետո Չինաստանը, ինչպես սպասվում է, կդառնա նաև երկրորդ երկիրն աշխարհում իր ռազմական ծախսերով: Թե՞ հաջողության գաղտնիքը ոչ թե ուժի, այլ այն չցուցադրելու մեջ է: Իսկապես, պետք է բավականաչափ ջանք գործադրել հիշելու համար, թե Չինաստանը ում է վերջին 15-20 տարիների ընթացքում սպառնացել, բացի Թայվանից, վերջնագիր ներկայացրել: Առիթներ եղել են, սակայն ամեն անգամ դա արվել է լուռ և առանց ավելորդությունների:

«Երբեք չլինել առաջնորդ». ահա արտաքին քաղաքականության մի սկզբունք, որը սերունդներին է պատգամել չինական բարեփոխումների ճարտարապետ Դեն Սյաոպինը[9]: Այս նորագյուտ աֆորիզմը վերծանման կարիք ունի, առաջնորդությունը չի կարելի պարտադրել. թող գան և խնդրեն, և ոչ մեկ անգամ:

Կարծում ենք՝ վերը շարադրված նրբանկատությունը արտաքին քաղաքականության բնագավառում կարող է ուսանելի լինել մի շարք երկրների

---

[6] **Hutton W.** *China and the West in The 21 th Century, Great Britain, Sunday Telegraph, 2009, p. 49.*

[7] **Lum T.** *China's Trade with theUnited States and the World, CRS Report for Congress, 2006, p 25-26.*

[8] *Նույն տեղում, էջ 43:*

[9] **Ikenberry John G.** *The Rise of China and the Future of the West (Foreign Affairs, 02.2008) http://www.foreignaffairs.com/articles*

փոխադարձ հարաբերությունների ձևավորման և կատարելագործման գործընթացում:

КИТАЙСКИЕ УРОКИ ИЛИ ДЕЛИКАТНАЯ ДИПЛОМАТИЯ

САРГСЯН Г. Г.

Резюме

Китайскую дипломатию часто называют деликатной, благодаря чему она разработала собственный рецепт завоевания международного уважения. Главнейшей характеристикой китайской дипломатии является концепт “гармонии”. В основе дипломатических успехов лежит культурное влияние, исходящее из идей и заветов китайской национальной философии.